

Հաջորդ տարիներին հայոց ցեղասպանության հարցը բազմիցս քննարկվեց ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովներում: 1987-ին այն ճանաչեց Եվրախորհուրդը: 1988թ. Հայոց ցեղասպանության մասին որոշում ընդունեց Հայաստանի Գերագույն խորհուրդը: Այն աշխարհի ամենատարբեր երկրների խորհրդարանների քննարկման նյութ դարձավ: Հեղինակը բերում է այդ քննարկումների ընթացքում պետական գործիչների՝ Թ.Օզալի, Ն.Կանտեմերի, Թ.Չիլլերի, Բիլ-Քլինտոնի, Հ.Կիլմերի, Է.Քեյնեդիի, Ռ.Դոլի, Ռ.Լեհմանի, Է.Կալեկլիի, Բ.Բոքսերի, Ջ.Պետերուի, Վ.Բոնիերի, Մ.Քոլոմոի, Մ.Նույկինի, Ա.Ռուցկոյի և այլոց արտասանած ճառերից քաղվածքներ: Նշվում է նաև, որ 1994թ. ապրիլի 22-ին Հայոց ցեղասպանության մասին հայտարարությամբ հանդես եկավ Ռուսաստանի դաշնության պետական դուման:

Վ.ՍՎԱԶԼՅԱՆ, Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ. Երևան, «Գիտություն» հրատ., 1995, 407 էջ

Ուսումնասիրությունն ընդգրկում է Մեծ եղեռնից վերապրած Արևմտահայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաբնակ գավառներից տարագրված, Հայաստանում (մասամբ սփյուռքում) բնակություն հաստատած արևմտահայերից գրի առնված՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ժողովրդական բանավոր գրույցները, հուշերն ու երգերը: Իր խոսքում գրքի խմբագիր Ս.Հարությունյանը, բարձր գնահատելով հեղինակի կատարած աշխատանքը, գրում է. «... ժողովածուն ունի հույժ պատմական արժեք ու նշանակություն... Կատարված է տքնաջան ու շնորհակալ մեծ աշխատանք հավերժ մոռացության վտանգից հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ողբերգական ու հերոսական պատմության անզուգական հուշերն ու երգերը փրկելու և անմահացնելու ուղղությամբ»:

Գրքում ներկայացված 70 հուշապատումները Մեծ

մղեռնի ականատես վկաների անմիջական տպավորությունների վերաբերյալ են, նրանց խոհերն ու մտորումները՝ արևմտահայությանը բանավոր ընկած ճակատագրի կենդանի պատկերների ստույգ ու ճշմարտարար վերարտադրությամբ:

Բացի հուշապատումներից և իրական, պատմական հենք ունեցող գրություններից, Վ. Սվազյանը վերապրողներից գրի է առել նաև իրենց խոստապահած 200-ից ավելի պատմական բնույթի երգեր ու վիպերգեր, որոնք պատմական ստույգության հետ միասին բնութագրվում են սեղմ պատկերավորությամբ ու մեղեդայնությամբ: Յուրաքանչյուր բանաստեղծական տող մի ավարտուն պատկեր է, զանգվածային ողբերգության մի ահասարսուռ տեսարան, իսկ լալահառաչ կրկներգերը լրացնում են բանաստեղծական պատկերի հուզական-հոգեբանական կողմը: Այդ գրությունները, հուշերն ու երգերը առարկայորեն տալիս են գորտադրված դաժանությունների (հարկահավաք, զորահավաք, բռնադատ, քաղաք, ջարդ, կոտորած), դեպի ամայի անապատները (Դեր Ձոր, Ռասուլ Այն, Ռաքքա, Հոմս-Համմա, Սուրուշ...) բռնի տեղահանությունների իրական պատկերը, ինչպես նաև արևմտահայ տարբեր հատվածների մղած արդար ու ազնիվ ոգորումներն ընդդեմ բռնության՝ պաշտպանելու համար իրենց մարդկային տարրական ապրելու իրավունքը (1915թ. Վանի հերոսամարտ, Սուսա լեռան, Շատախի, Շապին-Գարահիսարի, Ուրֆալի, ավելի ուշ՝ 1920-21թթ. Այնթապի, Հաճընի հերոսամարտեր): Այդ գրություններն ու երգերը ինքնապաշտպանական հերոսամարտերում նարտիրոսացած հերոսների (Չորավար Անդրանիկ Օզանյան, վանեցի Արմենակ Եկարյան, սեբաստացի Սուրադ, մուսալեռցի Եսայի Յաղուզյան, ուրֆացի Մկրտիչ Յոթնեղբայրյան, այնթապցի Ադուր Լևոնյան, Քոնյունցի Արամ Չուլաքյան, ազգային վրիժառու Սողոմոն Թեխլիրյան), ռազմաթիվ հայտնի ու անհայտ այլ հայորդիների մասին մի իսկական հերոսապատում է, հայորդիներ, որոնք ժողովրդական զանգվածների հետ միաձուլված պայքարել են, խոշտանգվել, նահատակվել, բայց և տղիմակայել են ու վերապրել:

Մեծ եղեռնից վերապրողներից գրառված հուշերը աշխատության մեջ ներկայացված են առանձին բաժնով, խմբավորված ըստ բանասացների ծննդավայրերի ու տարիքային առանձնահատկությունների: Ի դեպ՝ պատմական բնույթի երգերը հորինվել են ոչ միայն հայերեն, այլև թուրքերեն, սակայն բացահայտ հայկական ծագմամբ, թեպետ ոչ կատարյալ թուրքերենի իմացությամբ (հաճախ հիշատակվում են հայե-

րեն բառեր ու արտահայտություններ):

Քառյակ-պատկերներում գեղարվեստական ձև ու կերպ են ստացել հայ ժողովրդի կրած տառապանքները՝ կապված տեղահանության, ացսորի, քարոյի ու կոտորածի հետ... Անգն ու անօգնական հայ մարդիկ, մտրակի ու սվինների հարվածների ներքո, քշվում էին իրենց պապենական շեն օջախներից: Եվ ժողովուրդը հակիրճ, բայց պատկերավոր տողերով նկարագրել է «Դեր Ձոր կոչվածը».

Դեր Ձորի անապատում շվարեցի մնացի,

Մորս ու հորս այնտեղ կորցրեցի,

Ավադ, ավադ, ողբալի է մեր վիճակը.

Դեր Ձորի անապատում մեր եղած ժամանակը:

Առանձնապես ծանր է եղել կողոպտված, որդեկորույս մայրերի վիճակը:

Այրելու տարրական պայմաններից զրկված հայ մայրերն իրենց ունեցվածքը թուրքական կառավարությանն ու զինված ավազակներին թողնելուց հետո, զգալով իրենց մոտալուտ վախճանը, իրենց սիրասուն զավակներին պահ են տվել բարի արաբներին կամ քրդերին, որպեսզի, եթե իրենք նահատակվեն, գոնե իրենց երեխաները ողջ մնան:

Խաբուր գետ, ճամփատ տուր. անապատն անցնեմ,

Որդիս մերկ-տկլոր արաբի գյուղումն է:

Իր հուշերում Գրիգոր Գյոզայանը (ծնվ. 1903թ.) անհուն երախտագիտությամբ է հիշում Հոմա-Համմայի ճամփին, Սուհարդի գյուղի արաբ քրիստոնյա բարի պառավին, որն «ամեն երեկո իր եփած փլավն ու գոտու մեջ խցկած հացի կտորները պատերի տակ ուժասպառ ընկած հայ որբուկներին գաղտագողի բաժանելուց հետո, անհետանում էր մթության մեջ»:

Գրառված հուշապատումների մեջ բազմաթիվ վկայություններ կան հայ երեխաներին բռնությամբ հավատափոխ անելու մասին: Ֆընդը-ջագցի Հարություն Ալբոյաջյանը (ծնվ. 1904թ.) հուզմունքով է հիշել թուրքական որբանոցում անցկացրած իր ծանր օրերը. «Ծնողներին կորցրած մեծ ու փոքր (նույնիսկ ծծկեր) հարյուրավոր քաղցած մանուկներ վխտում էին թուրքական որբանոցի մեծ սրահի մեջտեղում, հարդի կույտի վրա, չգգալով, որ իրենցից շատերն արդեն սովից անշնչացած են, իսկ ողջ մնացողներին քաշկռտելով տանում էին թլպատելու՝ անունն ու հավատը փոխելու»:

«Պատահում էր այնպես, պատմել է գեթունցի Եվա Չուլյանը (ծնվ. 1903թ.), որ մայրերի մոտից փախցնում էին երեխաներին կամ աղջիկներին, բռնաբարում էին հարսներին ու աղջիկներին, հետո կապկապելով նետում էին ձորը կամ չորացած ջրհորների մեջ ու կրակի տալով բռնաբարում»:

Ահա թե ինչու հավատափոխ չլինելու, թուրքի կին չդառնալու, թուրք երեխաներ չծնելու համար հայ աղջիկները իրենց Եփրատ գետն էին նետում:

Գնացող-գնացող հայ աղջիկներ,

Մի օր մահը դեմ կգա մեզ,

Թշնամու կին չդարձած

Եփրատի մեջ գտնենք մահ:

Սակայն ողբերգական այդ օրերին, հայ ժողովրդի հոգում վերաբարձեց բռնությանը զենքի ուժով դիմադրելու, հերոսացման խիզախություն: Մուսա լեռան հերոսամարտը ցույց տվեց մարդկությանը թե ինչի է ընդունակ մի բուռ ժողովուրդ, եթե ունի հերոսական ավանդույթներ, ազատատենչ ոգի և միասնական կամքի ուժ.

Օսմանական ասկյարները,

Մուսա լեռան կտրիճները,

Հարս ու աղջիկ, մանուկները,

Զարթնիր, մուսալեռցի, զարթնիր,

Ողջ աշխարհում հռչակվեցիր:

Այնուհետև, 1915 թվի հոկտեմբերին կազմակերպվում է Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը, որի մասին ևս ժողովուրդը հյուսել է իր ոյուցազներգությունը:

1920 թվի հունվարից քեմալական զորքերը գրոհում են Մարաշ քաղաքի հայկական թաղամասերի վրա, սկսում են կոտորել անմեղ հայերին.

Ավաղ, Մարաշին Մարաշ են ասում,

Մարաշ, քեզ ինչպես են Մարաշ ասում,

Երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում,

Եկեղեցու մեջ հայերին վառում:

Թուրք ջարդարարները 1922թ. հրո ճարակ են դարձնում նաև Զմյուռնիայի հունական և հայկական թաղամասերը՝ քրիստոնյաներին ջշելով ծովափ:

Աւ ծովում՝ ահեղ փոթորիկ,
 Ունեցվածքդ առ շալակիր,
 Մայր թշնամին է գալիս,
 Աղքիկդ մնացել է ճամփին:

Համատարած հրդեհի, թոհ ու բոհի այդ գեղենից ազատվել կարողանում էին միայն նրանք, ովքեր իրենց վերջին ոսկեդրամներն ու գոհարեղենը տալիս էին թուրքերին՝ իրենց կյանքը փրկելու համար: Իսկ ովքեր միջոց չունեին, արհամարհելով մահը նետվում էին ծովի ալիքների մեջ, լողալով հասնելու հեռվում խարիսխ օգած եվրոպական դոշակներ կրող շոգենավերին, որոնք հայ անտուններին տանելու էին ուր որ պատահեր:

Հատորում ինչպես բարբառային, նույնպես և թուրքալեզու բնագրերը ներկայացված են հեղինակի կատարած զուգահեռ գրական հայերեն բառացի թարգմանություններով:

Ժողովրդագրական նյութերը գրի առնելիս հեղինակն աշխատել է անադարտորեն հավատարիմ մնալ բանասացների բանավոր խոսքին՝ գրառումները կատարելով բարբառագիտական ընդունված տառադարձությամբ:

Բարբառային նյութերը գրի առնելիս հաշվի է առնվել Կիլիկիայի (Ձեյթուն, Ֆընդլըզագ, Հաճըն, Սուսա լեռ, Քեսաբ, Մարաշ, Բեյլան, Այնթապ, Դյորտյոլ, Սիս, Տարսոն, Ադանա, Հասան Բեյ, Մերսին) արդեն իսկ անհետացող բարբառների, ինչպես նաև արևմտահայ որոշ շրջանների (Եղեսիա, Տիգրանակերտ, Բիթլիս, Էրզրում, Վան, Խարբերդ, Քղի, Բալու, Մալաթիա, Կեսարիա, Սեբաստիա, Շապին-Գարահիսար, Նիդե, Արաբկիր, Յոզղատ, Կոնիա, Աֆիոն-Գարահիսար, Ադաբազար, Էսքիշենի, Բուրսա, Բիլեջիկ, Նիկոմիդիա, Չմյուռնիա, Չանաքլալե, Ռոդոսթո, Կ. Պոլիս) արևմտահայության լեզվական առանձնահատկությունները:

Գրքում զետեղված են նաև Մեծ եղեռնից վերապրած բանասացների և պատմաագագրական տարբեր բնույթի լուսանկարներ, արևմտահայոց տեղահանության ուղղություններն ու կտտորածի տեղավայրերը ցույց տվող քարտեզներ և պատմական նորահայտ երգերի մեղեդիների նոտագրություններ: Աշխատությունն ունի բառարան, որտեղ տրված են բարբառային ու օտարամուտ դժվար հասկանալի բառերի բացատրությունները և ժանոթագրությունների աղյուսակ: